# Սրինգ

Հայաստանում տարածված է հեթանոսական ժամանակներից: Հայերենում *սրինգ* բառը լայնորեն գործածվում է հնուց:

Առաջին գրավոր վկայությունները հանդիպում են 5-րդ դարի պատմիչների աշխատություններում:

Կոմիտասն այդ անվանումը մասնավորեցրել է ժողովրդական բլուլին: Նրա կարծիքով, սրինգը հայ ժողովրդի տիպական ազգային նվագարան է, ինքն էլ փայլուն տիրապետում էր այդ նվագարանին:

Ժամանակին օգտագործվել է ոչ միայն հասարակ մարդկանց կենցաղում, այլ նաև իշխանական պալատներում տեղի ունեցող խնջույքներում:

Ժամանակակից սրինգն ունի ութ ձայնանցք երեսի մասում և մեկը՝ հակառակ կողմում: Նվագում են թեք դիրքով (ըստ կատարողի հարմարության՝ աջակողմյան և ձախակողմյան):

Առավելապես մենակատարային նվագարան է, թեև կարող է օգտագործվել նաև անսամբլներում: Սրինգով կատարվում են հովվական մեղեդիներ, երգեր ու պարեղանակներ: Հայ կոմպոզիտորները հատուկ սրինգի համար գրել են ստեղծագործություններ: